Համընդհանուր հայտարարագրում մտցնելն այսօրվա դրությամբ արդյունավետ չի լինի. նախկին փոխվարչապետ

13:11, 14.12.2022
Տարածաշրջան:Հայաստան
Թեմա: Տնտեսություն

Ես 30 տարի՝ մինչև 2020 թվականը եղել եմ այս համակարգի ջատագովը: 2020 թվականից հետո գտնում եմ, որ այս համակարգն առանձնապես նպատակահարմար չէ, քանի որ ունենք համահարթ եկամտահարկ, որի պարագայում կոնսոլիդացում հնարավոր չէ, և դրա հետևանքով մենք եկամուտների էական ավելացում չենք ունենալու: Ցանկացած հարկային ռեֆորմ, որի արդյունքում էական արդյունավետություն չի ավելանում, կարծում եմ, խնդրահարույց է: Այս մասին Ազգային ժողովում դեկտեմբերի 14-ին բնակչության համընդհանուր հայտարարագրման թեմայով խորհրդարանական լսումների ժամանակ ասել է նախկին փոխվարչապետ Վաչե Գաբրիելյանը:

«Մյուս տեսնակյունից՝ եթե եկամուտների ավելացում չի լինելու և մենք առողջապահության և սոցիալական հարցերի հստակություն չունենք, ապա շահառուներ, որոնք այս գործընթացի հետևանքով կարող են ունենալ հարկերի նվազեցում և ինչ-որ առումով հարկերի վերադարձ պետությունից, ինչի հետևանքով նրանց մոտ խթան կառաջանա լրացնելու հարկերը, չկան: ԱՄՆ-ում շատերը լրացնում են հատկապես դրա համար, որպեսզի պահված եկամտից իրենց վերադարձվի որոշակի եկամուտ որոշակի ծախսերի դիմաց»,- նշում է տնտեսագետը:

Գաբրիելյանի խոսքով հաշվի չեն առնվել նաև խթանիչ միջոցառումներ, որոնց միջոցով այլ համակարգերի տեղեկատվությունը կմտնի այս համակարգ՝ դրանք պասիվ եկամուտների տեսանկունից ավելի թափանցիկ դարձելով:

Մյուս տեսանկյունից տնտեսագետը առաջադեմ է համարում նախալրացված էլեկտրոնային տարբերակների տրամադրումը: Սակայն համակարգի ներդրումը առանց անձի էլեկտրոնային նույնականացման ներդրման խնդիրներ է ստեղծում, քանի որ լրացման ընթացքում անձը կարող է որոշակի տեղեկատվություն և փաստաթղթեր չունենալ, օրինակ տույժերի և տուգանքների վերաբերյալ, և այդ տեղեկատվությունն ինքնաշխատ կերպով պետք է ստանա պետությունից, գործատուից ստանա տեղեկատվություն, թե որքան հարկ է վճարել և այլն:

Նախկին փոխվարչապետը բարձրաձայնեց նաև անձի ծանուցման հարցն է: «Կարող են առաջանալ բազմաթիվ հարցեր, թե հարկային մարմնի կողմից կանխալրացված հայտարարագիրը հասանելի է, թե հասանելի չէ, ես տեսել եմ, թե չեմ տեսել, ես դրան պարտավոր եմ արձագանքել, թե ոչ: Եթե նախապես լուծվում է էլեկտրոնային նույնականացման հարցը, այս և այլ խնդիրներ լուծվում են»:

Չկա նաև այն հարցի պատասխանը, թե պատշաճ ծանուցումն ինչ է ենթադրում իրենից, դա որքանով է վիճարկելի, և ինչ պատասխանատվության են մարդիկ ենթարկվում ծանուցման համար նախատեսված էլեկտրոնային հասցեների փոփոխման դեպքում, ով է թարմացնում այս տեղեկատվությունը և այլն: Այս և նմանատիպ այլ ընթացակարգային, դետալային հարցերին իրավական լուծում չտալու դեպքում, ըստ Գաբրիելյանի, նման համատարած համակարգ միլիոնավոր քաղաքացիների համար ներդնելու դեպքում բազմաթիվ խնդիրներ են առաջանալու:

Մանրամասները՝ տեսանյութում: